3.3 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության դիմաց վճարումը կատարվում է ըստ փաստացի կատարված աշխատանքի: Յուրաքանչյուր աշխատանքի գինը որոշվում է հավելվածում ներկայացված գնային առաջարկով, որը չի ներառում գործուղման ծախսերը:

Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով կանխիկ, կամ անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վճարումն իրականացվում է 20 Բանկային օրվա ընթացքում: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է արձանագրության հիման վրա: Եթե մատուցված ծառայության դիմաց վճարելու համար նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները պետության կողմից տրամադրվում են Պատվիրատուին:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

6.4 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ	«Համակարգիչների աշխարհում» ՍՊԸ
ք.Վանաձոր, Պ.Սևակի 51	ք. Վանաձոր, Մ. Խորենացի 5
Հ/հ 247170009242	Հ/հ 20502 22006581001
ԱՇԻԲ Վանաձորի մասնաճյուղ	Ինեկոբանկ Վանաձորի մասնաճյուղ
ՀՎՀՀ 06902113	ՀՎՀՀ 06908205
Տնօրեն՝ Ռոբերտ Չիլինգարյան	Տնօրեն՝ Նունե Խուբլարյան
---------- ստորագրություն	---------- ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.